

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

22.12.2003թ.

ժ. 11.⁰⁰

Մասնակցում էին՝

Ս. Մնացականյան (*Խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան (*Խորհրդի անդամներ*), Ա. Աղազարյան (*Խորհրդի քարտուղար*)

Հրավիրված էին՝ Լ. Սիրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Գ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետ*), Հ. Տիտիզյան (*Ֆինանսների և դրամաշրջանառության վիճակագրության բաժնի պետ*)

Օրակարգի նախագծում՝ մեկ հարց.

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև թիվ 1-ՏԳ (փոքր) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 260 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Տիտիզյան/

Նախագահի կողմից ներկայացվեց Խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Զվերակության արդյունքները- կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև թիվ 1-ՏԳ (փոքր) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 260 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Հ. Տիտիզյան/

Նշվեց, որ ՀՀ ՎՊԽ 260-Ն որոշմամբ հաստատված հաշվետվության ձևի լրացման հրահանգի 2.2 կետի վերնագրում և բովանդակության մեջ տեղի է ունեցել վրիպում և ներկայացվող փոփոխությունների նպատակը դրանց վերացումն է:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 2-ի «Հաշվետվություն կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» ձև թիվ 1-ՏԳ (փոքր) (եռամսյակային, տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 260-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Կազմակերպության տնտեսական գործունեության հիմնական ցուցանիշների վերաբերյալ» Ձև թիվ 1-ՏԳ (փոքր) պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 2.2 կետի անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Թողարկման ծավալն ըստ գործունեության ոչ հիմնական տեսակների»,

բ) 2.2 կետի՝ «թողարկման ծավալների (ներառյալ ԱԱՀ և ակցիզային հարկը, ակցիզային հարկը, պարզեցված հարկը և հաստատագրված վճարը)» բառերը փոխել «թողարկման ծավալների (առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի, պարզեցված հարկի և հաստատագրված վճարի)» բառերով:

/Նորմատիվ/

/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 6, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Աղազարյան